ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2021 թվականի N 338-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 10-րդ և 12-րդ հոդվածների 1-ին մասերի 5-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքներում քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1) ***Միհր Գևորգյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

2) ***Արթուր Հակոբյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետ,

3) ***Հայկ Հակոբյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության խորհրդական:

2. Աշխատանքային խմբին՝ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ մինչև *2021 թվականի հոկտեմբերի 1-ը* ներկայացնել համապատասխան տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 22
ք. Հրազդան